» եղից յամպս, և եղիցի ի նշանակ յաւիտե-
» նական ուխտին ընդ իս և ընդ ամենայն
» երկիր. և եղիցի ի գումարել ինձ զամպս
» ի վերայ երկրի, երեւեսցի Աղեղն իմ յամ-
» պըս, և յիշեցից զուխտ իմ որ ընդ իս
» և ընդ ձեզ »: — Այս այլեւայլ երեւ-
ցած գոյներն յօղս՝ Հիրիկ ծաղկան վրայ նըշ-
մարելով՝ զոր Իրիս (Iris) կոչեն Լատինք և
Յոյնք, գիտես Հերայի նաժիշտ մի ստեղծե-
ցին, որոյ հաւատարիմ ծառայութեան համար
տիկինն փոխարկէ զնա ի ծիածան կամ ի
վերայ ծիածանի: Հայերէն անունն թէ ծա-
ւալման թէ ցոլացման իմաստ կ'ընծայէ. իսկ
գոյներուն մէջ երկուքն աւելի Հայոց աչքին
զարնելով՝ ռամկօրէն Կարմիր-կանաչ կոչած
են զօղերեւոյթն, և աւելի յստակ և հասա-
րակ՝ Ծիրանի գօտի. իսկ այլ աւելի հին և
անծանօթ կրօնից աւանդութեամբ՝ Տիրկան
կամ Տիրական գօտի, թերեւս Տիր դից ըն-
ծայուած: Աստուածակամար այլ կոչուած է,
ըստ Անանիայի Շիրակ. բայց թուի ի քրիս-
տոնէից, ինչպէս հիմայ՝ Աստուածածնի գօտի
ի ռամկաց:

(Շարայարելի)

# ԳԱՆՁ

## ՍՐԲՈՑ ՄԱՆԿԱՆՑ ԲԵԴՂԵՀԵՄԻ

Արդէն տարւոյս փետրուար ամսաթերթէն ծանօթ է մեր ընթերցողաց Խաչատուր վարդապետին գանձուց մին՝ Քարոզ Տեառնընդառաջի խորագրով յէջ 78. սոյն գանձս ևս որոյ սկզբնատառերը՝ նոյնպէս Խաչատրոյ անունը կը յօդեն, ի վայելս մեր յարգոյ ընթերցողաց՝ կը հրատարակեմք ի Բազմավիպիս:

Արդարև Խաչատրոյ բանաստեղծական հանճարոյն չափն՝ ինքնին ընթերցողն կարէ գուշակել սոյն գանձիս ընթերցմամբ, յորում կարծես իւր աշխոյժն ի բանաստեղծականին՝ սոյն մատաղերամ մանկանց վարդագոյն արեան և նռնաթօթափ գլխոց՝ զգայուն տօնին պահած՝ ջանացեր է՝ այնպէս ներկայացնել, որպէս արդեօք ցանկալի էր մեզ նկատել և նկարել: Բառքն և բանք վարդապետիս*, այնպէս ի մի ձուլած և զուգուած է, որ կարծես չուզեն իրարմէ անջատիլ, ինչպէս և մանկունքն՝ յիսուսական փափագով ի միմեանց. աւելորդ է մեզ երկարաբանել քանի որ մեզնէ աւելի նոյն իսկ Խաչատրոյ քընարն կը խօսի և կ'ազդէ ընթերցողին սրտին սրբազոյն և նրբագոյն թելերուն վերայ. արդեօք ինչ ազդեցութիւն որ բանքն կ'ընեն, նոյնն և աւելին չպիտի՞ գործէին մեր վերայ, եթէ իւր քերնով, իւր ձայնով լսէինք սոյն վայելչահիւս տողերս. բայց ատենն ուշ է և եղանակն կարծեմ ինքն իւր հետ վեր տարած, գոնէ ըլլանք՝ որ գոնեա սոյն պատառիկքս կը լնուն մեր անյագ իղձերը. ուրեմն դու խօսէ քնարդ քրիստոսալար:

Խմբ.

Խանդաղակաթ սրտիւ տենչալի
Ձեզ տօնեսցուք, ո՛ւռք արմաւենի.
Գունդք աղաւնեաց և ձագք տատրակի.
Վայելչագեղ վարդ մանուշակի.
Կայծ և կարմիր արեամբ ծիրանի՝
Գըսակեցէք սուրբ զեկեղեցի.
Մատաղ մանկունք որդիք Սիովնի,
Տըղայք սիրունք դուք Բեդղահէմի,
Վըկայք եղէք մեր Տեառն Յիսուսի
Նորածընեալ արքային Բանի.
Բարեխօսեցէք առ Տէրն ամենի [չեմք:
Զմերս ընդունել պատարագ բանի: — Աղա-

Ազգաղական ողբըն կատարի
Ի Հըռաքէլ առ ձեզ վըկայի.
Զայն մեծ գուժի ողբումն աշխարհի
Լալ աղաղակ Հռամայ քաղաքի.
Զի Հերովդէս ընդ ձեզ մաքառի,
Կամի որսալ զմանուկըն բարի.
Հրաման հանէ ձեզ կոտորածի,
Բառնալ զօծեալն ի Բեդղահէմի.
Զձեզ անդրանիկ Հօրըն սիրելի

* Ի բաց առեալ քանի մի տեղ՝ ուր կը կրկնէ յանգերն նոյն բառով, զոր հեղինակէն աւելի գըրչագրաց անմտադրութեան կարելի է վերագրել:

digitised by A.R.A.R.@

Զայն կուսածին Աստուածն ամենի։
Մեզ ողորմեա Աստուածդ ամենի, [չեմք։
Հայցմամբ մանկանցըն Բեթղահէմի։ — Աղա-

Զըքնաղագեղ մանկունք գըգուանաց՝
Ցափըշտակեալք ի մարցըն գըրկաց.
Կաթն ի յարիւն խառնեալ անմեղաց,
Գոչմամբ ձայնի մարցն ընդդէմ դահճաց։
Մանկունքն յահէ սըրոյն սպանողաց՝
Ի գիրկըս մարցն ահիւ տագնապած.
Հրաման սաստիկ էր զօրականաց՝
Սըրով հանել ըզձեզ ի կենաց.
Վասըն Բանին Աստուծոյ բարձանց [ողորմեա։
Որ մարդացաւ (վասն) Ադամայ մեղաց։ — Մեզ

Այ Բարեգութ Տէր երկայնամիտ,
Անունդ օրհնեալ է քո ճշմարիտ.
Մատաղ մանկունքն ի մարցն ըստենից
Տըղայքն եղեն առ քեզ բարեմիտ.
Ի մանկական քո սուրբ հասակիդ
Սոքա վըկայք երկնից արքայիդ,
Ընծայեցան պըտուղ արքայիդ։
Փոխան մեռան ընդ գերակայիդ,
Վասըն ծննդեան Եմմանուէլիդ
Ըսպանան տղայքն ընդ գերակայիդ։ — Մեզ..

Տեսէք որ մարքդ էք ծընեցելոց
Եւ կամ տեսեալ զարիւն սպանելոց.
Դուք ողբացէք ընդ ցաւագնելոց
Անմեղ մանկանցըն կոտորելոց.
Ներկեալ արեամբ տեսէք ըզփողոց
Ձեր վարդագոյն արեամբ թափելոց.
Ողբս ասացէք ընդ մարցըն տղայոց.
Զտօնս պատուեցէք ընդ զօրս անմարմնոց
Ըզսուրբ մանկանցըն կոտորելոց
Վասն Յիսուսի ի մահ մատնելոց։ — Յիշեա..

Ողբան ձայնիւ մարք սըրտաբեկեալ,
Լան ըզմարմինս սըրբոցն յօշոտեալ.
Այ գեղեցիկ տըղայք ատընդիտայք,
Որ վարդագոյն արեամբ ներկեցայք.
Այ լուսատես մանկունք զարդարեալք՝
Այսօր արեամբ գունով կարմրացայք։
Այ քաղցրախօս տըղայք լուսափայլք,
Նըռան ծաղկի նըման թափեցայք.
Անուշախօսք և քաղցրանըւագք.
Որպէս ողկոյզք արեամբ ճըմլեցայք,
Ծաղիկք գարնան ի ցըրտոյն հարեալք,
Կամ ի չողոյն՝ պըտուղք վայրթափեալք։
Այ քաղցրաձայն ձագունք ճըռվըռեալք,
Այսօր մարմինք ձեր դիաթաւալք.
Այ ոսկէհատ մանկունք ատընդիտայք, [եւս։
Փոխան Փըրկչին այսօր կատարեալք։ — Եւ

Խնամամբ աղերս ներբողաբանեալ
Ի տկարութիւն մըտաց մեր վարժեալ,
Բաղձմամբ սըրտիւ ի ձեզ խոնարհեալ՝
Արեան հոսմանց ձեր օժանդակեալ.
Յօր կատարման ձեր հանդիսացեալ՝
Զհնչմունս ձայնից աղերս մատուցեալ.
Սուրբ և սիրով Սիոյն մօտեցեալ՝
Որդիք լուսոյ յերկինս վերացեալ,
Բեթղահէմի մանկունք կատարեալք [ձինս, ան։
Փոխան Փրկչին դուք ի մահ մատնեալք։ — Զան-

Րամից խըմբից զօրաց արքային՝
Մայր աղախին Աստուծոյ բանին,
Պայծառ երկինք, ծաղիկ լուսածին,
Ամենազով Կոյսըդ տիրածին.
Կըցորդութեամբ մանկանց հանդիսին՝
Կոտորելոցն ի Բեթղահէմին,
Եւ Յովհաննու մեծ Կարապետին,
Ստեփանոսի և Լուսաւորչին.
Սոքօք մատիր առ քոյդ Միածին,
Գըթալ ի մեզ յաւուրն ահագին.
Թողուլ զյանցանս մեր ժողովըրդին,
Զնընջեցելոցըն մեր ամենին.
Մաքրեալ ըզմեզ ի մեղաց ախտին
Հոգոյ կըրից եւ ի մարմնային։ — Ողորմեաց
մեզ, Տէր և այլն։

digitised by A.R.A.R.@